

Կարեն Հ. Խաչատրյան
Պատմ. գիտ. դոկտոր

ՌԱԶՄԱԿՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՌԱԶԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1991–1993 ԹԹ.)*

Բանալի բառեր – Հայաստանի Հանրապետություն, ռազմաարդյունաբերական համալիր, ռազմաարդյունաբերական հանձնաժողով, արտադրություն, զենք, զինամթերք, ռազմական տեխնիկա:

Հայաստանի երրորդ հանրապետության պաշտպանունակության ամրապնդման գործում կարևոր դեր ու նշանակություն ունի ռազմաարդյունաբերական համալիրը (Ռ-ԱՀ), որի կատարելագործմանն ու դերի բարձրացմանն է միտված 2015 թ. մարտի 25-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Ռ-ԱՀ-ի մասին» ՀՀ օրենքը¹:

Հայտնի է, որ խորհրդային տարիներին Հայաստանի գիտությունն ու արդյունաբերությունը զգալի ավանդ են ներդրել ԽՍՀՄ ՌԱՀ-ում, և հայաստանյան տասնյակ գործարաններում ու ձեռնարկություններում, զիտաարտադրական միավորումներում, նախագծային բյուրոներում ռազմապաշտպանական արտադրությունը մեծ ծավալի է հասել²: Սակայն ԽՍՀՄ փլուզման շրջանում համամիութենական պատվերների և ֆինանսների փաստացի բացակայության, ռազմական նշանակության ապրանքներն արտադրությունից հանելու և այլ պատճառներով վերջիններիս գերակշիռ մասը կան պարապուրդի մեջ էր հայտնվել, կան նրանց ծանրաբեռնվածությունը գտնվում էր ծայրահեղ ցածր մակարդակի վրա³:

Հայաստանում զենքի ու զինամթերքի արտադրության, ռազմապաշտպանական արդյունաբերության վերակազմակերպման համար հուժկու ազդակ էր Արցախյան պատերազմը: Դեռևս Արցախյան շարժման սկզբնական շրջանում, ԽՍՀՄ պայմաններում, Հայաստանի մի քանի ձեռնարկություններում տարերայնորեն սկսվեցին զենք և զինամթերքի արտադրու-

*Հոդվածն ընդունվել է տպագրության 7.05.2017:
1 Տե՛ս ՀՀ օրենքը «Ռազմաարդյունաբերական համալիրի մասին» (<http://www.parliament.am>):
2 Տե՛ս **Խաչատրյան Կ. Հ.**, Հայաստանը ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական համալիրի համակարգում, Եր., 2015:
3 Տե՛ս նույն տեղում, էջ 284:

թյան, ծանր սպառազինության և ռազմական տեխնիկայի վերանորոգման աշխատանքները, որոնք կանոնակարգում էր «Ղարաբաղ» կոմիտեն:

Ի տարբերություն խորհրդային ժամանակաշրջանի, երբ ոլորտի հայաստանյան ձեռնարկությունները մասնագիտացված էին միասնական ՌԱՀ-ի համար համալրող մասեր և համակարգեր արտադրելու գործում, Արցախյան պատերազմի պայմաններում առաջնային էր դառնում սեփական մշակման թեթև սպառազինության, ավտոմատների, հակատանկային նռնականետների, ականանետների և ժառանգություն ստացած խորհրդային հրազենային և հրանոթային զինատեսակների համար փամփուշտների, ռումբերի, արկերի ու ականների արտադրությունը: Հարկ է նշել, որ խորհրդային վերջին տասնամյակներին հանրապետության ռազմապաշտպանական ոլորտի մեքենաշինության, գործիքաշինության, սարքաշինության, հաստոցաշինության, ռադիոտեխնիկական, ռադիոէլեկտրոնային, քիմիական և այլ ձեռնարկություններում կուտակված փորձն ու մեծ ներուժը նման արտադրություն կազմակերպելու, ինչպես նաև ռազմական տեխնիկան սպասարկելու ու վերանորոգելու հնարավորություն էին տալիս:

Հայաստանում ՌԱՀ-ի կառավարման համակարգի ստեղծման, պետական պատվերներով զենքի և զինամթերքի արտադրության կազմակերպման հիմքերը դրվեցին անկախության առաջին իսկ օրերից՝ հանրապետության շրջափակման, սոցիալտնտեսական ծանրագույն պայմաններում: Արդեն 1991 թ. հոկտեմբերի 16-ին հրավիրվում է ՀՀ մշտական կերպով գործող պաշտպանության հանձնաժողովի անդրանիկ նիստը, որին մասնակցում են ՀՀ Նախարարների խորհրդի նախագահի պաշտոնակար Հ. Բագրատյանը, ՀՀ ԳԽ պաշտպանության հանձնաժողովի նախագահ Վ. Սարգսյանը, ՀՀ Ֆինանսների նախարար Զ. Զանոյանը, ՀՀ Նախարարների խորհրդին առընթեր պաշտպանության կոմիտեի նախագահ Վ. Շիրխանյանը, «Այգ» արտադրական միավորման (ԱՄ) գլխավոր տնօրեն Հ. Սիմոնյանը, «Հայէլեկտրամեքենա» գիտաարտադրական միավորման (ԳԱՄ) գլխավոր տնօրեն Կ. Դեմիրձյանը, «Հրազդանմեքենա» ԱՄ գլխավոր տնօրեն Թ. Տեր-Պետրոսյանը, Կիրառական քիմիայի ինստիտուտի տնօրեն Գ. Հասրաթյանը, «Հաստոցաշինական գործարան» ԱՄ գլխավոր տնօրեն Ա. Հովհաննիսյանը և այլք:

Երկրի պաշտպանության համար զենքի, զինամթերքի և զինտեխնիկայի արտադրության կազմակերպման, հանրապետության ռազմական դոկտրինի մշակման հարցերի հետ միասին նիստում քննարկվում են նաև ռազմական գործի և արտադրության կառավարման հարցերը: Մասնավորապես «ՀՀ Նախարարների խորհրդի արդյունաբերության բաժնի հատուկ տեխնիկական միջոցների սեկտորին հանձնարարվում է հաջորդ նիստին ներկայացնել առաջարկություններ հանրապետության մշտական գործող ռազմաարդյունաբերական համակարգի ապարատային կառուցվածքի մասին: Նիստում որոշվում է նաև ՀՀ մշտական գործող պաշտպանության հանձնաժողովի կազմում ընդգրկել ՀՀ կապի նախարար Ռ. Ավոյանին, «Հայէլեկտրաշարժիչ» ԱՄ գլխավոր ինժեներ Ժ. Մուրադյանին, ՀՀ ներքին գործերի նախարարի պաշտոնակատար Ա. Մանուչարյանին⁴:

4 Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 113, ց. 181, գ. 620, թ. 115-118:

1991 թ. հոկտեմբերի 31-ին տեղի է ունենում ՀՀ ռազմաարդյունաբերական հանձնաժողովի երկրորդ նիստը՝ ՀՀ նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Վ. Ամիրբեկյանի նախագահությամբ: Նիստին որպես հրավիրված մասնակցում էր ՀՀ Նախարարների խորհրդին առընթեր պաշտպանության կոմիտեի շտաբի պետ Գ. Դալիբալթայանը: Օրակարգում էին հանրապետության ռազմական տնտեսության իրականացման նպատակով ռազմաարդյունաբերական համալիրի ծրագրային առաջադրանքների ձևավորման, ՀՀ ՌԱՀ-ի դրույթների նախագծի քննարկման և այլ հարցեր: Որոշվում է ՀՀ մշտական գործող պաշտպանության հանձնաժողովը վերանվանել ՀՀ ռազմաարդյունաբերական հանձնաժողով, հաստատել վերջինիս մասին դրույթները և ներկայացնել հանրապետության նախագահի հաստատմանը: Նիստում հաստատվում է նաև հանձնաժողովի կառուցվածքը, որոշվում է նրա կազմում ընդգրկել հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավոր Ռ. Ղազարյանին, «Սևան» ԳԱՄ գլխավոր տնօրենի տեղակալ Ռ. Աթոյանին, ՀՀ պետանվտանգության կոմիտեի (ՊԱԿ) նախագահ Հ. Հարությունյանին, Ռադիոֆիզիկական չափումների գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն Պ. Հերունուն⁵:

1991 թ. նոյեմբերի 5-ին ՀՀ կառավարությունը Նախարարների խորհրդի նախագահի պաշտոնակատար Հ. Բագրատյանի ստորագրությամբ հաստատում է «ՀՀ ռազմաարդյունաբերական հանձնաժողովի մասին» հիմնական դրույթները⁶: Իսկ կառավարության 1992 թ. փետրվարի 9-ի թիվ 36 կարգադրությամբ հաստատվում է ՀՀ մշտական գործող ռազմաարդյունաբերական հանձնաժողովի նոր կազմը⁷:

Վերջապես 1992 թ. փետրվարի 25-ին ՀՀ առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը հաստատում է Հայաստանի կառավարությանն առընթեր գործող «ՀՀ ռազմաարդյունաբերական հանձնաժողովի մասին» Կանոնադրությունը, հանձնաժողովի կառուցվածքը և կազմը: Համաձայն փաստաթղթերի՝ հանձնաժողովի նախագահն էր ՀՀ վարչապետը, իսկ գործունեության անմիջական ղեկավարությունը իրականացնելու էր նախագահի տեղակալը, հանձնաժողովի նիստերն անցկացվելու էին պարբերաբար՝ ամիսը երկու անգամ: Նախատեսվում էր, որ ՀՀ կառավարության ապարատում հանձնաժողովը ունենալու էր աշխատանքային խումբ⁸, որը վերահսկելու էր նրա որոշումների կատարումը:

Կանոնադրությամբ հաստատվում են հանձնաժողովի գլխավոր խնդիր-

5 Տե՛ս նույն տեղում, թ. 105 և շրջ.-106 և շրջ.:

6 Տե՛ս նույն տեղում, գ. 641, թ. 14-17:

7 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 185, գ. 754, թ. 1-2: Նրա մեջ մտնում էին՝ նախագահ՝ ՀՀ փոխվարչապետ Հ. Բագրատյան, փոխնախագահ՝ ՀՀ պետական նախարար Վ. Չիտեյան, անդամներ՝ ՀՀ պաշտպանության նախարար Վ. Սարգսյան, ՀՀ նախագահի գլխավոր խորհրդական Ա. Մանուչարյան, ՀՀ նախագահի խորհրդական Վ. Շիրխանյան, ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Ա. Զարբայան, ՀՀ ազգային անվտանգության պետվարչության (ԱԱՊՎ) պետ Հ. Հարությունյան, ՀՀ ֆինանսների նախարար Զ. Զանոյան, ՀՀ արդյունաբերության նախարար Ա. Սաֆարյան, ՀՀ արդյունաբերության նախարարի տեղակալ Ժ. Մուրադյան, ՀՀ նյութական ռեսուրսների նախարար Վ. Մելքոնյան, ՀՀ էկոնոմիկայի նախարարության մոբիլիզացիոն բաժնի վարիչ Վ. Ազոյան, ռազմաարդյունաբերական հանձնաժողովի աշխատանքային ապարատի ղեկավար (պատասխանատու քարտուղար) Լ. Նազարյան:

8 ՀՀ ՌԱՀ-ի աշխատանքային խմբի «Կանոնադրությունը» հաստատվեց 1992 թ. հունվարի 30-ին: Տե՛ս ՀԱԱ, ֆ.113, ց. 181, գ. 657, թ. 22:

ներն ու գործառույթները: Դրանցից էին՝ հանրապետության պաշտպանունակության պահանջումները բավարարելու նպատակով հատուկ տեխնիկական միջոցների տեսականու և արտադրության զարգացման, գիտատեխնիկական առաջընթացի և աշխատանքի արտադրողականության բարձր տեմպերի ապահովման գլխավոր ծրագրերի քննարկումը և հաստատումը: Հանձնաժողովը համակարգելու էր հանրապետության ձեռնարկություններում հատուկ տեխնիկական միջոցների ամբողջ տեսականու (որի գլխավոր պատվիրատուն էր ՀՀ պաշտպանության նախարարությունը) արտադրության հետ կապված աշխատանքները: Հանրապետության կառավարությանը առաջարկություններ էին ներկայացվելու հատուկ տեխնիկական միջոցների մշակումների և կատարելագործման, արտադրության կազմակերպման, ինչպես նաև սերիական թողարկման համար անհրաժեշտ ֆինանսավորման մասին: Սահմանվում էր, որ ՀՀ ռազմաարդյունաբերական հանձնաժողովի որոշումների կատարումը պարտադիր է նախարարությունների, պետվարչությունների, գերատեսչությունների, ՀՀ-ում տեղաբաշխված ձեռնարկությունների, հիմնարկությունների և կազմակերպությունների համար: Հանձնաժողովի կարևոր գործառույթներից էր նաև ձեռնարկությունների, հիմնարկությունների և կազմակերպությունների ղեկավարների կողմից հատուկ արտադրանքի մշակման, փորձարկման և արտադրության անվտանգության կարգի խախտման փաստերի քննարկումը և որոշումների ընդունումը: ՀՀ ՌԱՀ-ն ունենալու էր հետևյալ կառուցվածքը՝ ՀՀ պաշտպանության նախարարություն, ռազմաարդյունաբերական հանձնաժողովի նախագահ, տեղակալ, հանձնաժողովի աշխատանքային խումբ, ՀՀ էկոնոմիկայի, ֆինանսների, նյութական ռեսուրսների, արդյունաբերության նախարարություններ, գերատեսչություններ և ձեռնարկություններ⁹:

ՀՀ ՌԱՀ-ի համակարգը առավել արդյունավետ և վերահսկելի դարձնելու նպատակով կառավարության 1992 թ. օգոստոսի 10-ի թիվ 433գ որոշմամբ հաստատվում է «Ձեռնարկություններում, գիտահետազոտական, կոնստրուկտորական և այլ կազմակերպություններում ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ներկայացուցիչների և մշակվող ու մատակարարվող ռազմական արտադրանքի պատշաճ որակի և լրակազմության ապահովման համար ձեռնարկությունների ու կազմակերպությունների ղեկավարների պարտականությունների մասին կանոնադրությունը»¹⁰:

ՀՀ կառավարության 1992 թ. հոկտեմբերի 10-ի կարգադրությամբ՝ ի փոփոխումն կառավարության 1992 թ. փետրվարի 9-ի կարգադրության՝ ՀՀ կառավարության ռազմաարդյունաբերական հանձնաժողովի նախագահի պաշտոնում Հ. Բագրատյանին փոխարինում է ՀՀ պետնախարարի պաշտոնակատար Վ. Մանուկյանը¹¹: Վերջինս շուտով հաստատում է ռազմաարդյունաբերական հանձնաժողովին առընթեր գիտատեխնիկական խորհրդի (ԳՏԽ) Կանոնադրությունը: Խորհրդին կից ստեղծվում են փորձագիտական հանձնախմբեր՝ ըստ ռազմապաշտպանական նշանակության

9 Տե՛ս ՀԱԱ, ֆ.113, ց. 181, գ. 657, թ. 16-21:

10 Տե՛ս նույն տեղում, ց. 184, գ. 804, թ. 1-28:

11 Տե՛ս նույն տեղում, ց. 185, գ. 779, թ. 1:

գիտական բնագավառների (ֆիզիկամաթեմատիկական, տեխնիկական և բնական գիտությունների): ԳՏԽ-ի հիմնական գործառնությունն է համարվում ռազմապաշտպանական նպատակներով հատուկ տեխնիկական միջոցների մշակումների, արտադրություն կազմակերպելու ուղղությամբ ստացված առաջարկությունների քննարկումը, տեխնիկատնտեսական հնարավորությունների հիմնավորումը, փորձագիտական եզրակացությունների և առաջարկությունների ընդունումը՝ ՀՀ ռազմաարդյունաբերական հանձնաժողովին ներկայացնելու նպատակով¹²:

ՀՀ ՌԱՀ-ի կառավարման նշված համակարգը շարունակեց գործել նաև 1993 թ., քանզի ՀՀ պետնախարարի պաշտոնակատար Վ. Մանուկյանի մոտ 1993 թ. փետրվարի 2-ին կայացած խորհրդակցությանը քննարկեց և ոչ նպատակահարմար համարեց ՌԱՀ-ի ու ռազմաարդյունաբերական հանձնաժողովի կառուցվածքի մեջ փոփոխություններ մտցնելը, ՌԱՀ-ի համակարգում ռազմական արդյունաբերության նոր գերատեսչություն ստեղծելը¹³:

Նշենք, որ հանրապետությունում ռազմական արտադրության ոլորտում համապատասխան գործառնությունների կազմակերպումը դրված էր նաև ՀՀ ՊՆ-ի վրա, որի կազմում 1992 թ. սեպտեմբերի 14-ին կազմավորվեց սպառազինության վարչությունը՝ գնդապետ Ռ. Մայրանցի գլխավորությամբ: Վարչության կազմում սկզբից եղած գործում էր նաև ռազմաարդյունաբերական ծառայություն: Վերջինիս հիմքի վրա էլ 1993 թ. հուլիսի 26-ին ստեղծվեց ՀՀ ՊՆ ռազմաարդյունաբերական վարչությունը, որը շուտով առանձնացվեց սպառազինության վարչությունից և 1994 թ. կազմավորվեց որպես առանձին վարչություն: Նրա հիմնական գործառնությունից էին՝ հանրապետության ՌԱՀ-ի ձեռնարկություններում սպառազինության, ռազմական տեխնիկայի, ռազմատեխնիկական միջոցների նմուշների մշակումներն ու արտադրությունը, ԽՍՀՄ-ից ժառանգած սպառազինության ու ռազմատեխնիկական ունեցվածքի սպասարկումը և վերանորոգումը, զենքի ու զինամթերքի պետպատվերների ձևավորումը և այլն¹⁴:

Ինչպես նշվեց, 1991 թ. հոկտեմբերի 16-ին գումարված ՀՀ մշտական գործող պաշտպանության հանձնաժողովի անդրամիկ նիստում քննարկվեցին նորանկախ հանրապետությունում ռազմական արտադրության կազմակերպման առաջնահերթ խնդիրները: Այդ ժամանակ զենք և զինամթերքի արտադրության կազմակերպման համար գլխավոր պատվիրատու հաստատվեց ՀՀ Նախարարների խորհրդի պաշտպանության կոմիտեն, հրանոթային, հրազենային բոլոր տեսակների և զինտեխնիկայի գլխավոր կապալառու ձեռնարկություն՝ «Այգ» ԱՄ-ը, փամփուշտների արտադրման պատասխանատու կազմակերպություն՝ «Նեյտրոն» գործարանը, հատուկ քիմիական նյութերի, պայթուցիչների, հրթիռային վառելիքի՝ «Արիակ» կիրառական քիմիայի ինստիտուտը: 1992 թ. համար պետական մատակարարումներն ապահովելու նպատակով բազային ձեռնարկություններին

¹² Տե՛ս նույն տեղում, ց. 181, գ. 664, թ. 40-41:

¹³ Տե՛ս նույն տեղում, գ. 657, թ. 47-48:

¹⁴ Տե՛ս **Շաղյան Պ.**, Ռազմաարդյունաբերական վարչությունը՝ 10 տարեկան, «Հայկական բանակ», Եր., 2003, N 2, էջ 16-17, **Զիլինգարյան Մ.**, ՀՀ ՊՆ սպառազինության վարչությունը 12 տարեկան է, «Հայկական բանակ», Եր., 2004, N 1, էջ 7-10:

հանձնարարվեց մինչև նոյեմբերի 1-ը ներկայացնել պահանջվող նյութերի, սարքավորումների, շինանյութերի պահանջարկը¹⁵: Հանձնարարվում է նաև ձեռնարկություններում զենքի սերիական արտադրություն կազմակերպելու համար ստեղծել համապատասխան արտադրական միավորներ, իսկ վնասված ռազմական տեխնիկայի վերանորոգումը կատարել ՀՀ Նախարարների խորհրդի պաշտպանության կոմիտեի հայտերով՝ «Հրազդան-մեքենա» արտադրական միավորումում: Վերջինիս ղեկավարությունը հրահանգավորվում է Պաշտպանության կոմիտեի հետ համատեղ մեկամսյա ժամկետում հանձնաժողովին ներկայացնել առաջարկություն՝ հանրապետության պաշտպանական համակարգը ռադիոտեխնիկական և էլեկտրոնային կառավարման միջոցներով ապահովելու համար: ՀՀ մշտական գործող պաշտպանության հանձնաժողովի որոշմամբ՝ հանրապետության զինկոմիսարիատին հանձնարարվում է 1991 թ. նոյեմբեր ամսից սկսած՝ յուրաքանչյուր զինակոչին իսկական ռազմական ծառայության կարգավիճակով «Այգ» ԱՄ ուղարկել 50 զինակոչիկ՝ զինագործ մասնագետներ պատրաստելու և միավորումում զինված պահակային ծառայություն կազմակերպելու նպատակով¹⁶:

Հանրապետության ՌԱՀ-ի համար ծրագրային առաջադրանքների ձևավորման, սպառազինությունների արտադրության և ձեռքբերման, փամփուշտների և պարկուճների սերիական արտադրության նախապատրաստական աշխատանքների, բանակը լազերային տեխնիկայով և ռադիոկապի միջոցներով ապահովելու, հակաօդային պաշտպանության համակարգի ստեղծման վերաբերյալ և այլ հարցեր էին ընդգրկված 1991 թ. հոկտեմբերի 31-ին տեղի ունեցած ՀՀ ռազմաարդյունաբերական հանձնաժողովի երկրորդ նիստի օրակարգում: Քննարկումների արդյունքում տրվեցին համապատասխան հանձնարարականներ, մասնավորապես. հանրապետության ՊԱԿ-ին հանձնարարվեց ձեռնարկել հրատապ միջոցառումներ՝ ռազմական արտադրություն կազմակերպելու նպատակով տեխնիկական փաստաթղթեր, աշխատանքային կանոնակարգեր և այլն ձեռք բերելու համար¹⁷:

Հայաստանում ՌԱՀ-ի ոլորտում իրականացված մեծածավալ աշխատանքների արդյունքում արդեն 1992 թ. գարնանը հանրապետության արդյունաբերության և գիտական մի շարք ձեռնարկություններ ու կազմակերպություններ ներգրավվեցին ռազմաարդյունաբերական հանձնաժողովի պատվերների կատարման, երկրի պաշտպանության կարիքների համար սպառազինության և ռազմական տեխնիկայի արտադրության բարդ և պատասխանատու գործում: Այդ մասին կարևոր փաստեր են պարունակում ՀՀ ԱԱՊՎ 2-րդ վարչության պետի տեղակալ, գնդապետ Գ. Հակոբյանի ստորագրությամբ պետվարչության ուսումնասիրությունների արդյունքում 1992 թ. ապրիլի սկզբին կազմած «ՀՀ արդյունաբերական և գիտական

15 Նշենք, որ ՀՀ կառավարության 1992 թ. սեպտեմբերի 24-ի որոշմամբ՝ ՀՀ նյութական ռեսուրսների նախարարության համակարգում ստեղծվեց հատուկ նշանակության «Բերդ» (հետագայում՝ «Ռեգուլ») պետական ձեռնարկությունը, որի գործունեության հիմնական խնդիրն էր ապահովել հանրապետության ՌԱՀ-ի համակարգի ձեռնարկություններին ու կազմակերպություններին բոլոր տեսակի նյութատեխնիկական պաշարներով (տե՛ս ֆ.113, ց. 181, գ. 681, թ. 209):

16 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 620, թ. 115-118:

17 Տե՛ս նույն տեղում, թ. 105-107 և շրջ:

հաստատություններում հատուկ արտադրանքի արտադրության մասին» ընդարձակ տեղեկանքը¹⁸ և ՀՀ նախագահի գլխավոր խորհրդական Ա. Մանուչարյանին ուղղված՝ «ՀՀ ՌԱՀ-ի գործընթացը առ 20.06.1992 թ.» գրությունը¹⁹: 1992 թ. հունվար-օգոստոս ամիսներին հանրապետության ՌԱՀ-ի ոլորտում իրականացված փորձակոնստրուկտորական, տեխնոլոգիական նախապատրաստական աշխատանքների և սերիական արտադրության կազմակերպման մասին ամփոփ տեղեկատվություն է ներկայացվում նաև ՀՀ արդյունաբերության նախարարության կողմից կազմված տեղեկանքում²⁰:

Փաստաթղթերի ուսումնասիրությունը և նյութերի համադրումը ցույց է տալիս, որ նշված ժամանակահատվածում ՀՀ պաշտպանության նախարարության 1992 թ. անվանացուցակի և հատուկ ապրանքների թողարկման հանձնարարականի համաձայն՝ «Այգ» ԱՄ-ում նախատեսվում էր «ՐՈՒ-7» ձեռքի հակատանկային նռնակների, «Նագան» տեսակի ատրճանակների, 5,45 տրամաչափի ավտոմատների, 7,62 տրամաչափի «ՇԵԿ» դիպուկահար հրացանների փորձարկված նմուշների արտադրություն: Արտադրական միավորմանը մեխանիկական մասեր և հանգույցներ մատակարարող ձեռնարկությունների շարքում ընդգրկված էին Երևանի «Հայէլեկտրամեքենա» ԱՄ հաստոցաշինական գործարանը, «Օրբիտա», «Սապֆիր» արտադրական միավորումները, Ստեփանավանի կահույքի ֆաբրիկան, Չարենցավանի «Գործիքաշինություն» ԱՄ-ի և «Ցենտրոլիտ» գործարանները, «Այգ» ԱՄ Ապարանի մասնաձյուղի «Արև» գործարանը²¹:

«Այգ» ԱՄ-ի պատվերով սեփական սշակման 5,45 տրամաչափի կարաբին (կարճափող հրացան), 7,62 տրամաչափի դիպուկահար հրացանի համար հանգույցի փակադակ, «Զեմյա-զեմյա» հրթիռների մեխանիկական մասեր են թողարկվել «Սապֆիր» ԱՄ գործիքաշինության և հաստոցաշինական արտադրամասերում: Բոլոր լրակազմ մասերը և հանգույցները պատրաստվել են միավորումում²²:

Հայաստանի կառավարության բանավոր կարգադրությամբ՝ 1991 թվականին ավտոմատներ են հավաքել «Գառնի» ԳԱՄ «Անի» գործարանում: Ավտոմատի հիմնական մասերը (փող, փակադակ, պատյաններ և այլն) փոքր խմբաքանակներով գործարանին մատակարարվել են հանրապետության այլ ձեռնարկություններից: «Անի» գործարանի ղեկավարության հավաստիացմամբ՝ պետպատվերի դեպքում ձեռնարկության արտադրական տարածքները և տեխնիկական հագեցվածությունը թույլ էին տալիս նվազագույն ծախսերով և կարճ ժամկետներում կազմակերպել ավտոմատների և նռնականետների համար նռնակների սերիական արտադրություն²³:

«ԱԿ» և «ԱԿԿ» տիպի ավտոմատ զենքի համար պահեստատուփեր (փամփշտադարան) նախագծելու և արտադրելու պատվեր էր տրվել Էջմիած-

18 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 641, թ. 169-187:

19 Տե՛ս նույն տեղում, թ. 216-221:

20 Տե՛ս նույն տեղում, գ. 664, թ. 34-39:

21 Տե՛ս նույն տեղում, գ. 641, թ. 169-170:

22 Տե՛ս նույն տեղում, թ. 179:

23 Տե՛ս նույն տեղում, թ. 172-173:

նի «Կարին» կոմբինատին²⁴: Ավտոմատների և ատրճանակների պլաստմասե դետալների և փողակալների արտադրություն է կազմակերպվել «Ամանոր» ձեռնարկությունում²⁵:

ՀՀ ՊՆ-ի պատվերով 5,5 մմ տրամաչափի կարճափող կարաբին հրացաններ, 22 մմ տրամաչափի հակատանկային հրացաններ, ակնանետների համար 64 և 68 մմ տրամաչափի արկեր են պատրաստվել «Տիգրան Մեծ» ասոցիացիայի Հ. Մեղապարտի անվան պոլիգրաֆ կոմբինատի մեխանիկական արտադրամասում: Այստեղ իրականացվել են նաև մարտական մեքենաների շտապ վերանորոգման աշխատանքներ²⁶:

ՀՀ կառավարությանը կից ռազմաարդյունաբերական հանձնաժողովի որոշումներով 1992 թ. ընթացքում 10 հազար ավտոմատ պատրաստելու պատվեր էր ստացել նաև Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի (ԵրՄՄԳՀԻ) փորձարարական գործարանը, որտեղ Հայաստանի կառավարության բանավոր կարգադրությամբ՝ դեռևս 1991 թ. կազմակերպվել էր ոչ մեծ քանակով արտադրություն: Նախատեսվում էր, որ զենքի համար բոլոր լրակազմ մասերը և հանգույցները պատրաստվելու են գործարանում²⁷: Նշենք, որ 1992 թ. ԵրՄՄԳՀԻ-ի մի քանի ստորաբաժանումների հիմքի վրա Երևանում ստեղծվեց Ավտոմատ կառավարման համակարգերի գիտահետազոտական ինստիտուտը (ներկայումս՝ «ԵրԱԿԳՀԻ» ՓԲԸ): Նույն թվականին ինստիտուտի փորձարարական գործարանը վերակազմավորվեց առանձին ձեռնարկության (ներկայումս՝ «ԵրՄՄԳ» ՓԲԸ): Մինչև 1993 թ. այստեղ իրականացվել են գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներ ռազմապաշտպանական արտադրության մի քանի ուղղություններով²⁸:

ՀՀ ՊՆ-ի պատվերներով ոչ մեծ քանակով ավտոմատների, նաև հակատանկային, հակահետևակային ականների և նռնակների արտադրություն է կազմակերպվել «Հայէլեկտրամեքենա» ԱՄ արտադրամասերում: Ականների և նռնակների ձուլածո պատյանները մատակարարվել են Չարենցավանի «Ցենտրոլիտ» և «Ավտոլիտ» գործարաններից: «Ավտոլիտ» գործարանի ձուլման արտադրամասում իրականացվել է նաև ականանետների արտադրություն: ՀՀ ՊՆ-ի և «Այգ» ԱՄ-ի պատվերներով երեք տեսակի ականանետեր և երկու տեսակի հրաձգային զենքի փողեր են պատրաստվել Չարենցավանի «Գործիքաշինություն» ԱՄ-ում, Երևանի «Հաստոցաշինական գործարան» ԱՄ-ում պատրաստվել են հակատանկային նռնականետների փողեր²⁹:

ՀՀ կառավարության բանավոր հանձնարարությամբ ականանետների փողի և ականի կայունացուցիչի համար 20 տեսակի նեցուկ է պատրաստվել «Էլեկտրոն» Հայկական արտադրական միավորման գլխամասային գործարանում: 1992 թ. հունվարից գործարանին տրվել էր տարվա կտրված-

24 Տե՛ս նույն տեղում, թ. 177-178:

25 Տե՛ս նույն տեղում, թ. 184:

26 Տե՛ս նույն տեղում:

27 Տե՛ս նույն տեղում, թ. 173-174:

28 Տե՛ս **Հովհաննիսյան Գ.**, Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի աշխատանքների հիմնական ուղղությունները և զարգացման հեռանկարները, «Հայկական բանակ», Եր., 2008, N 1, էջ 58:

29 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 641, թ. 176-180:

քով 120 000 «Ֆ-1» տեսակի ձեռքի նոնակի արտադրության պատվեր: Պատրաստի արտադրանքը տեղափոխվել է «Բազալտ» գործարան, որտեղ դրվել են պայթուցիչները: Նոնակների համար պայթուցիչների արտադրություն կազմակերպվել է նաև «Էրեբունի» ԳԱՄ «Մասիվ» սարքաշինության գործարանի արտադրամասերից մեկում: 1992 թ. «Էլեկտրոն» գործարանում նախատեսվում էր սկսել հակատանկային և հակահետևակային ականների, հեռակառավարվող ռադիոպայթուցիչների արտադրություն³⁰:

«Բազալտ» գործարանին կից «Այգ-1» փոքր ձեռնարկության (ՓՁ) պատվերներով հակատանկային ականների համար լրակազմ մասեր արտադրվել են «Հաստոցանորմա» գործարանում, ականանետների համար 10 անուն լրակազմ մասեր թողարկվել են նաև «Հայհաստոց» ԳԱՄ-ի մեխանիկական արտադրամասում և «Հայքիմմեքենա» ԱՄ-ում³¹:

Հակատանկային ականներ նախատեսվում էր արտադրել նաև Էջմիածնի «Պլաստմաս» գործարանում: Նշելի է, որ նման արտադրության փորձ գործարանն ուներ դեռևս խորհրդային տարիներից. ԽՍՀՄ ՊՆ-ի պատվերով 1989 թ. այստեղ պատրաստվել էր 600 ական, իսկ դրանց փորձարկման արդյունքում պատվիրատուի կողմից որևէ դիտողություն չէր եղել: Ականի առանձին հանգույցներ մատակարարելու էին Երևանի ժամացույցի և Երևանի ավտոմեքենաների գործարանները³²:

ՀՀ պաշտպանության նախարարության հանձնարարությամբ՝ տարբեր տրամաչափի փամփուշտների փորձնական նմուշների արտադրություն կազմակերպելու խնդիր էր դրված «Նեյտրոն» ԳԱՄ-ի առջև, որտեղ այդ նպատակով ձեռք էին բերվել ռոտորային ավտոմատ երկու արտադրահոսքեր: Դրանք, սակայն, դեռ տեղադրման փուլում էին և հատուկ ապրանքի թողարկումը հետաձգվում էր: Փամփուշտների սերիական արտադրություն կազմակերպվելու էր նաև «Նեյտրոն» ԳԱՄ-ի Արտաշատի մասնաձյուղի «Սուր» գործարանում, որը, ըստ ԳԱՄ-ի գլխավոր տնօրենի տեղակալ Կ. Ավանյանի, իր տրամադրության տակ ուներ տեխնիկական և արտադրական բավարար հնարավորություններ³³: «Նեյտրոն» ԳԱՄ-ի պատվերով պարկուճ արտադրելու համար նախապատրաստական աշխատանքներ էր իրականացնում Կամոյի «Դիպոլ» ԱՄ-ը³⁴:

Տարբեր տրամաչափի փամփուշտներ նախատեսվում էր թողարկել նաև «Ռելե» ԱՄ-ում, այստեղ, սակայն, համապատասխան հաստոցային սարքավորումների և մասնագետների խնդիր կար: Ուստի ձեռք էր բերվել պայմանավորվածություն արտադրական միավորման աշխատակիցներին Սանկտ-Պետերբուրգի մեխանիկական ինստիտուտ գործուղելու վերաբերյալ՝ փամփուշտներ թողարկելու փորձն ուսումնասիրելու և հնտություններ ձեռք բերելու նպատակով³⁵:

ՀՀ ռազմաարդյունաբերական հանձնաժողովի հանձնարարությամբ՝ «Արիակ» կիրառական քիմիայի ինստիտուտում աշխատանքներ էին տար-

30 Տե՛ս նույն տեղում, թ. 172-174:

31 Տե՛ս նույն տեղում, թ. 183:

32 Տե՛ս նույն տեղում, թ. 176:

33 Տե՛ս նույն տեղում, թ. 171-172:

34 Տե՛ս նույն տեղում, թ. 178:

35 Տե՛ս նույն տեղում, թ. 183-184:

վում հրթիռային պինդ վառելիքի խառնուրդներ և դրանց բոցավառման բաղադրություններ ստեղծելու ուղղությամբ: Արդեն 1992 թ. վերջերին այդ աշխատանքները հիմնականում ավարտվել էին, պատրաստվել և հավաքվել էր հրթիռների արձակման «Արձակ» կայանքը³⁶:

«Արիակ»-ի Աշտարակի մասնաձյուղում փորձակոնստրուկտորական աշխատանքներ կազմակերպվեցին՝ 82 մմ տրամաչափի «Ալազան» հրթիռների արտադրություն հիմնելու համար: «Այգ» ԱՄ-ի պատվերով հրթիռների և դրանց համար «Ա-1» տիպի արկի առանձին մասեր և հանգույցներ են արտադրվել Սևանի «Էլեկտրաապակեմեկուսիչների» և գործադրող մեխանիզմների գործարաններում: Ծրագրվում էր «Այգ» ԱՄ-ի և Հայաստանի ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի հետ համատեղ աշխատանքներ իրականացնել՝ «Արաբո-1» տիպի բալիստիկ հրթիռային համակարգի («Գրադ» համակարգի դասակարգ) արտադրություն կազմակերպելու համար³⁷:

Նշենք, որ հանրապետությունում հատուկ տեխնիկական միջոցների տեսականին ավելացնելու և թողարկումը ընդլայնելու նպատակով ՀՀ կառավարության որոշմամբ՝ 1992 թ. հունվարի 1-ից Բյուրականի աստղադիտարանի աստղաֆիզիկական սարքերի հատուկ կոնստրուկտորատեխնոլոգիական բյուրոյի (ԲԱՀԿՏԲ) բազայի վրա կազմավորեց «Արիակ» կիրառական քիմիայի ինստիտուտին կից «Բագավան» հատուկ կոնստրուկտորական բյուրոն՝ փորձնական արտադրությունով³⁸:

ՀՀ ՌԱՀ-ի որոշմամբ և ՀՀ ՊՆ-ի պատվերով «Հրագդանմեքենա» ԱՄ-ում կազմակերպվել են անվադողային և թրթուրավոր զրահատեխնիկայի վերանորոգման փորձարարական աշխատանքներ: Տեխնիկական հագեցվել է կապի նորագույն միջոցներով, գիշերատեսության սարքերով, կատարվել են զենիթահրետանային համակարգերի լրացուցիչ մշակումներ, հարմարեցվել են թնդանոթների հենակետապտտվող համասարքերը, իրականացվել է ռադիոտեղորոշող համակարգերի, զինվորական ստորաբաժանումների (վաշտ, դիվիզիա) կառավարման ավտոմատ համակարգերի արտադրություն: Նշենք, որ խորհրդային տարիներին «Հրագդանմեքենան» նման արտադրության առաջատար ձեռնարկություններից էր ամբողջ ԽՍՀՄ-ում³⁹: Արտադրության համար լրակազմ մասեր, հանգույցներ և նյութեր մատակարարել են «Հայգյուղտեխնիկա»-ը, «Հայգյուղտեխնիկա»-ն, «Հայնավթամթերք» ԱՄ-ն և այլ ձեռնարկություններ: «Հրագդանմեքենա» ԱՄ-ում արդիական խնդիր էր փորձարարական հրաձգարանի կառուցումը, որտեղ պետք է իրականացվեին բոլոր տեսակի պատրաստի ռազմական ապրանքների փորձարկումներ⁴⁰:

ՀՀ ՌԱՀ-ի ոլորտում նշանակալի ձեռքբերումներից բացի՝ վերոնշյալ տեղեկանքներում նշվում է նաև բազմաթիվ թերությունների և բացթողումների մասին, պարզվում է, որ էլեկտրաէներգիայի բացակայության պատճառով մի շարք ձեռնարկություններում խաթարված էր արտադրության

36 Տե՛ս նույն տեղում, թ. 174–175, տե՛ս նաև՝ ֆ. 113, ց. 181, գ. 678, թ. 108–109:

37 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 641, թ. 176–178:

38 Տե՛ս նույն տեղում, գ. 620, թ. 148–149:

39 Տե՛ս Խաչատրյան Կ., նշվ. աշխ., էջ 263:

40 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 641, թ. 181–182:

ընթացքը, լուծված չէին արտադրության համար անհրաժեշտ նյութերի մատակարարման, արտադրության ֆինանսավորման հարցերը, բացակայում կամ ոչ պատշաճ մակարդակի վրա էր ներքին անվտանգության կանոնակարգը, թերի էր հատուկ արտադրանքի հսկողությունը, ինչը չէր բացառում դրանց կորուստը արտադրության ընթացքում, զենքի և զինամթերքի ապօրինի հափշտակումը և այլն⁴¹: Իսկ նման դեպքեր, իրոք, լինում էին, օրինակ՝ ՀՀ ԱԱՊՎ պետ Վ. Պողոսյանը 1992 թ. հունիսի 1-ի գրությամբ հայտնում էր ՀՀ կառավարությանը կից ռազմաարդյունաբերական հանձնաժողովի փոխնախագահ Վ. Չիտեչյանին այն մասին, որ օպերատիվ տվյալներից հայտնի է դարձել, որ «Հայէլեկտրամեքենա» ԱՄ արտադրամասերից մեկին կից գործող արտադրական տեղամասում կազմակերպված է կարճեցված փողերով ավտոմատների և նոնականետների արտադրություն: Պարզվել է, որ «վերոհիշյալ ավտոմատները օգտագործվում են հանցավոր խմբավորումների կողմից հակաօրինական գործողություններ իրականացնելու ժամանակ»⁴²: Նման փաստերը եզակի չէին:

Հանրապետությունում հատուկ արտադրանքի արտադրության վերաբերյալ մանրամասն տեղեկություններից բացի՝ տեղեկանքներում արվում էին նաև առաջարկություններ՝ ՀՀ-ում գործընթացն առավել վերահսկելի և արդյունավետ դարձնելու համար: Մասնավորապես ՀՀ ԱԱՊՎ-ի կողմից առաջարկվում էր հանրապետության բոլոր գիտաարդյունաբերական ձեռնարկությունները ներառել ՌԱՀ-ի պատվերները կատարելու մեջ՝ անկախ անվանացուցակի և արտադրվող հատուկ ապրանքների ծավալից: Ռազմամթերքի ապօրինի պատրաստումը բացառելու, հնարավոր հափշտակումները և դրանց անվերահսկելի տարածումը հանրապետությունով մեկ կանխելու, անվտանգության ռեժիմի հուսալիությունն ապահովելու համար ՀՀ կառավարությանն առաջարկվում էր գլխավոր կարգադրություն պատրաստել պաշտպանական պատվերների կատարմանը ներգրավված ձեռնարկությունների ղեկավարների համար: Այդ նպատակով պահանջվում էր խստացված անվտանգության կանոնակարգ մտցնել հատկապես ԵրՄՄԳՀի փորձարարական գործարանում, «Էլեկտրոն» ԱՄ-ում, «Նեյտրոն» ԳԱՄ-ում («Սուր» գործարանով), «Օրբիտա» ԱՄ-ում, «Սապֆիր» ԱՄ-ում, «Հրագդանմեքենա» ԱՄ-ում, Չարենցավանի «Գործիքաշինություն» ԱՄ-ում, Երևանի «Հաստոցաշինական գործարան» ԱՄ-ում, Էջմիածնի «Կարին» կոմբինատում, «Այգ» ԱՄ-ում («Արև» գործարանով), «Արիակ» կիրառական քիմիայի ինստիտուտում («Բազավան» մասնաձյուղով): Արվում էին նաև այլ առաջարկություններ⁴³:

Ռազմամթերքի մշակումներից և արտադրությունից, ռազմական տեխնիկայի վերանորոգման և կատարելագոծման աշխատանքներից բացի՝ անկախության առաջին իսկ տարիներից հանրապետությունում փորձում էին քայլեր ձեռնարկել նաև ռազմական բարդ տեխնիկա արտադրելու ուղղությամբ: Այսպես, ՀՀ կառավարությանը կից ռազմաարդյունաբերական հանձնաժողովի տեխնիկական խորհրդի 1992 թ. սեպտեմբերի 22-ի նիս-

41 Տե՛ս նույն տեղում, թ. 170-187:

42 Տե՛ս նույն տեղում, թ. 212:

43 Տե՛ս նույն տեղում, թ. 185-187:

տին լավում և նպատակահարմար է համարվում ընդունել հանրապետությունում թեթև ինքնաթիռների արտադրություն կազմակերպելու մասին «Սելենա» գործարանի ղեկավարության առաջարկը: Սակայն նկատի ունենալով, որ թռչող ապարատների արտադրությունը պահանջում է ֆինանսական խոշոր ներդրումներ, հարցի վերջնական քննարկումը տեղափոխվում է ռազմաարդյունաբերական հանձնաժողով, իսկ ՀՀ արդյունաբերության և պաշտպանության նախարարություններին առաջարկվում է ուսումնասիրել հարցը և ներկայացնել եզրակացություն⁴⁴: Վերջինս չի հապաղում. ՀՀ կառավարությանը կից ռազմաարդյունաբերական հանձնաժողովի աշխատանքային խմբի ղեկավար Լ. Նազարյանին 1992 թ. հոկտեմբերի 7-ին ուղղված նամակում, որը ստորագրել էր ՀՀ պաշտպանության նախարարի սպառազինության գծով տեղակալ գեներալ-մայոր Մ. Աբրահամյանը, նշվում էր, որ. «Հանրապետությունում թռչող ապարատների արտադրության կազմակերպումը նպատակահարմար չէ: Առաջարկում ենք ձեռք բերել երկու նմուշ, որոնց տեխնիկական հնարավորությունների ուսումնասիրությունից հետո միայն կարելի կլինի վերանայել արտադրություն կազմակերպելու հարցը»⁴⁵:

1992 թ. ընթացքում ՌԱՀ-ի ոլորտի ձեռնարկություններին հատկացված և 1993 թ. պետական պատվերը կատարելու համար նախատեսված գումարների մասին տեղեկանում ենք ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնակատար, ՀՀ կառավարությանը կից ռազմաարդյունաբերական հանձնաժողովի նախագահ Վ. Մանուկյանի 1993 թ. մայիսի 19-ի գրությունից և դրան կից տեղեկանքից: Ներկայացնելով 1992 թ. ընթացքում ՌԱՀ-ի ոլորտում կատարված և ավարտին հասցված հիմնական աշխատանքները, այնտեղ նշվում էր, որ ոլորտում հատուկ արտադրանքի գծով կատարվել են 55 մլն ռուբլու գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական և արտադրության նախապատրաստման աշխատանքներ՝ նախատեսված 46 մլն ռուբլու դիմաց: Իսկ արդեն 1993 թ. համար, համաձայն «Հայաստանի Հանրապետության 1993 թվականի պետական պատվերի և պետական առաջադրանքի հաստատման մասին» կառավարության 1993 թ. մայիսի 7-ի որոշման (գաղտնի հավելվածով)՝ գիտատեխնիկական, փորձակոնստրուկտորական աշխատանքների կատարման համար հատկացվել էր 293,9 մլն ռուբլի, իսկ ՌԱՀ-ի ձեռնարկությունների կապիտալ շինարարության պետական պատվերի ծավալները կազմել էին 1,025 մլրդ ռուբլի⁴⁶: Այսպիսով, ՌԱՀ-ի ոլորտի հատկացումները տարեցտարի բազմապատկվում էին:

Ռազմապաշտպանական արտադրությունը ՀՀ ՌԱՀ-ի ձեռնարկություններում հաջողությամբ շարունակվեց նաև 1993 թ., այսպես՝ «Այգ» ձեռնարկության ապրանքային արտադրանքի պլանի համաձայն՝ ՀՀ ՊՆ-ի պատվերներով պատրաստվելու էին հակատանկային և հակահետևակային նռնականետներ և նռնակներ, ավիացիոն ռումբեր, «Կալաշնիկովի» գնդացիք և 5.45 մմ ավտոմատ հրացան, բանակին անհրաժեշտ տեխնիկական

44 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 664, թ. 44:

45 Տե՛ս նույն տեղում, գ. 660, թ. 144:

46 Տե՛ս նույն տեղում, գ. 678, թ. 105-109:

միջոցներ, գույք և հանդերձանք⁴⁷: ՀՀ արդյունաբերության նախարարության «Անի-Լեռ» պետական ձեռնարկությունը 1993 թ. առաջին վեց ամսվա ընթացքում արտադրել էր մի քանի տեսակի նոնակներ (հակատանկային, բեկորային, ավտոմատ), ականանետներ և ականներ, անկառավարելի հրթիռային և հրետանային արկեր, հակատանկային ղեկավարվող ռեակտիվ ռումբ, գնդացիներ և այլն⁴⁸:

Այսպիսով, անկախության առաջին տարիներին Հայաստանի իշխանություններին հիմնականում հաջողվեց ձևավորել հանրապետության ՌԱՀ-ի կառավարման բավականին ձկուն համակարգ, ինչը նպաստեց երկրում ռազմական արտադրության կազմակերպմանն ու զարգացմանը: Շրջափակման, սոցիալ-տնտեսական ճգնաժամի, պատերազմական գործողությունների պայմաններում հանրապետության ՌԱՀ-ի ձեռնարկությունները արտադրեցին և ՀՀ բանակին մատակարարեցին մեծ քանակի զենք և զինամթերք, զինվորական գույք և հանդերձանք, վերանորոգված և համալրված ռազմական տեխնիկա և այլն՝ դրանով իսկ մեծապես նպաստելով Արցախյան պատերազմում հայության հաղթանակին և Հայաստանի Հանրապետության սահմանների ամուր պաշտպանությանը:

Կարեն Հ. Խաչատրյան – գիտական հետաքրքրությունների շրջանակում են Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության, հայ-ռուսական հարաբերությունների, Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի պատմության հիմնահարցերը: Հեղինակ է երեք մենագրությունների և հիսունից ավելի գիտական հոդվածների, համահեղինակ և համակազմող՝ մի քանի աշխատությունների, դպրոցական դասագրքերի, փաստաթղթերի և նյութերի ժողովածուների:

Summary

THE ORGANIZATION OF MILITARY-INDUSTRIAL COMPLEX IN ARMENIA DURING THE FIRST YEARS OF THE INDEPENDENCE (1991-1993)

Karen H. Khachatryan

Key words – Republic of Armenia, military-industrial complex, military-industrial Commission, manufacturing, weapons, ammunition, military equipment.

During the first years of Armenia's independence the authorities have mainly succeeded in forming a quite flexible system of management of the MIC (military-industrial complex), which contributed to the organization of military production and its development within the country. In the conditions of blockade, socio-economic crisis, war activities the MIC enterprises produced and

47 Տե՛ս նույն տեղում, գ. 681, թ. 2-3, թ. 12-13:

48 Տե՛ս նույն տեղում, թ. 14-15:

provided the army with a large amount of weapons and ammunition, military equipment and uniform, renovated and equipped military equipment, etc., thereby greatly contributing to the glorious victory of Armenians in Artsakh war, as well as in the strong defense of newly-independent Armenia's borders.

Резюме

ОРГАНИЗАЦИЯ ВОЕННО-ПРОМЫШЛЕННОГО КОМПЛЕКСА В АРМЕНИИ В ПЕРВЫЕ ГОДЫ НЕЗАВИСИМОСТИ (1991-1993 ГГ.)

Карен Г. Хачатрян

Ключевые слова – Республика Армения, военно-промышленный комплекс, военно-промышленная комиссия, производство, оружие, боеприпасы, военная техника.

В первые годы независимости властям Армении в основном удалось сформировать достаточно гибкую систему управления военно-промышленным комплексом (ВПК) республики, что способствовало организации и развитию военного производства в стране. В условиях блокады, социально-экономического кризиса, военных действий, предприятия ВПК республики произвели и поставили армии РА большое количество оружия и боеприпасов, военного имущества и снаряжения, отремонтированную и оснащенную военную технику и т. д., тем самым значительно способствуя победе армянского народа в Арцахской войне и надежной обороне границ Республики Армения.